«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ	Սովորողների մեջ ընթերցանության խթանումն ու զարգացումը տարրական դասարաններում
ԱՌԱՐԿԱ	Դասվար
ՀԵՂԻՆԱԿ	Լիանա Հարությունյան
ՄԱՐԶ	Կոտայք
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ	Հրազդանի Պ. Սևակի անվ. № 8 հիմն. դպրոց

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն……3

Կարդալու կարողության ձևավորման մեթոդներն ու դրանց իրագործման եղանակները մայրենիի դասավանդման ժամանակ……4

Ընթերցողական կարողությունների զարգացումը տարրական դասարաններում……8

Ընթերցանությունը որպես բառապաշարի հարստացման միջոց……11

Ընթերցանությունը մտքի համար նույնն է, ինչ ֆիզիկական վարժությունը՝ մարմնի……14

Եզրակացություն……16

Օգտագործված գրականություն և հղումներ……17

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ընթերցանությունը խորացնում է մտածողությունը, միտքը մղում դեպի որոնումներ և երևույթների վերլուծություն:

Մ. Ի. Կալինին

Կան երեխաներ, որ ծնված օրվանից գրքի սիրահար են: Նրանք կարող են ժամերով զբաղվել ընթերցանությամբ, ցեցի նման մտնել գրքերի մեջ ու դուրս չգալ:

Բայց, շատերը գիրք կարդալ չեն սիրում, հատկապես հեռուստացույցով ու համակարգչային խաղերով լի մեր առօրյայում: Իսկ ի՞նչ անել այդ դեպքում: Ի՞նչ անել, եթե երեխան դժվարությամբ և/կամ դժկամությամբ է գիրք կարդում: Առհասարակ ինչի՞ համար է պետք գիրք կարդալ, այն էլ թվայնացման մեր դարաշրջանում:

Այս դարում մարդիկ օգտվում են համակարգչից ավելի շատ, քան գրքերից: Սակայն համակարգչով գիրք կարդալը աչքերին, նյարդային համակարգի, մարդու մկանների վրա բացասական ազդեցություն է թողնում:Այս ամենից, սակայն, **երբեք չի դադարում գրքի տպագրությունը**, քանզի երբեք համակարգիչը չի կարող լրացնել գրքի տեղը. **գիրքը միշտ էլ մնում է անփոխարինելի:**

Ընթերցանությունը կարևոր նշանակություն ունի մարդու համար: Այն ոչ միայն օգնում է, որպեսզի դառնանք խելացի, այլ կարող է նաև բարելավել ուղեղի աշխատանքը:

Մեր <u>նպատակն է *զարգացնել*</u> կրտսեր դպրոցականների կարդալու, վերարտադրելու կարողությունները, ճանաչողական և լեզվական գիտելիքները, <u>*կատարելագործել*</u> նրանց հարուստ խոսքի ու բառապաշարի կիրառական հմտությունները, <u>*ձևավորել*</u> արժեքների համակարգ:

Այդ ամենին հասնելու համար անհրաժեշտ է, դեռևս առաջին դասարանից, **<u>մշակել և կիրառել</u> այնպիսի մեթոդներ ու հնարներ**, որոնք կօգնեն հետագայում ունենալ խելացի ու զարգացած քաղաքացիներ:

Կարդալու կարողության ձևավորման մեթոդներն ու դրանց իրագործման եղանակները մայրենիի դասավանդման ժամանակ

Կրտսեր դպրոցում մայրենիի դասընթացի կարևոր բաղադրիչներից է ընթերցանությունը, որի նպատակն է զարգացնել կրտսեր դպրոցականների կարդալու, վերարտադրելու կարողությունները: Սովորողների կարդալու տեխնիկայի զարգացմանը զուգընթաց անհրաժեշտ է նաև արտահայտիչ խոսքի և կարդալու կարողություններ մշակել դեռևս գրաճանաչության այբբենական շրջանում: Այդ աշխատանքը պետք է սկսել՝ աշակերտներին ծանոթացնելով խոսքի տեխնիկայի բաղադրիչներին՝շնչառություն, ձայն, հնչերանգ, առոգանություն: Հատուկ շնչառական վարժությունների միջոցով աշակերտներին առաջին հերթին պետք է սովորեցնել ճիշտ շնչել: Կարելի է կատարել առոգանությունը զարգացնող վարժանքներ:

Մեթոդիկայում մշակված են աշակերտների հնչյունային լսողությունը և առոգանությունը զարգացնող շատ վարժություններ: Այսպես՝

ա. կարդալ մտքում

բ. արտասանել շշուկով, դանդաղ, ցածրաձայն, կամաց, բարձրաձայն և արագ:

Նախադասության մասին տարրական գիտելիքների ուսումնասիրման ժամանակ անհրաժեշտ է երեխաների ուշադրությունը հրավիրել հարցական, բացականչական, հրամայական, պատմողական նախադասությունների արտասանության ելևէջների վրա և սովորեցնել գործնականորեն տարբերել դրանց ընթերցման առանձնահատկությունները:

Պրոֆեսոր Ա. Ե. Տեր-Գրիգորյանը տեղին է նկատել. *«Արտահայտչականությունը լավ կարդալու հիմնական ու իր կատարելությամբ ամենաբարձր առանձնահատկությունն է, առանց դրա կարդալը կատարյալ համարվել չի կարող»:*

Մշակելով երեխայի արտահայտիչ ընթերցանությունը՝ նրան հավաստիացնում ենք, որ գեղեցիկ ընթերցելն արվեստ է՝ ինչպես գեղեցիկ երգը, որը հիացնում է մարդկանց և լսվում հաճույքով: Այն ձևավորում է գրական ճաշակ, բարձրացնում լեզվական մշակույթը, ազդում սրտի և զգացմունքների վրա, նպաստում մտածողության զարգացմանը, հարստացնում գիտելիքները:

Ինչպես ասել է Ղ. Աղայանը. *«…Յուրաքանչյուր շեշտ և կետ զանգակի պես հնչում է երեխայի ականջին, հոգեբուխ երգի նման թափանցում է մարդկային հոգու խորքերը, թրթռացնում բոլոր նուրբ լարերը նրա մոտ »:*

Ճիշտ է նկատել մեծ մանկավարժը, քանի որ տարրական դասարաններում արտահայտիչ կարդալ սովորեցնելու հիմքում ընկած է առաջին հերթին հայերենի կետադրական նշանների ըմբռնումը և ընթերցանության գիտակցականությունը: Աշակերտը պետք է զգա առոգանության ու տրոհության նշաններին առնչվող դադարների ու հնչերանգի, ինչպես նաև բնագրի բովանդակությունից բխող տեմպի ու ձայնի ելևէջների փոփոխությունը:

Կան մի շարք հնարներ, որոնք նպաստում են խորությամբ ըմբռնել ընթերցածը.

ա. դիտարկել և մեկնաբանել ստեղծագործության վերնագիրը,

բ. առանձնացնել հենակետային (բանալի) բառերն ու արտահայտությունները,

գ. վերլուծել բնագիրն ու պարզաբանել հիմնական գաղափարը, ենթատեքստը և այլն:

Աշակերտների՝ արտահայտիչ ընթերցելու կարողության ձևավորմանը մեծապես նպաստում են ուսուցչի կամ աշակերտների կարդալու եղանակների վերլուծությունները, որոնք կարելի է կատարել հետևյալ հաջորդականությամբ.

ա.Կարդալ ստեղծագործությունը՝ ուշադրություն հրավիրելով ընտրված ստեղծագործությանը վերաբերող յուրաքանչյուր մանրուքի:

բ. Որոշել ստեղծագործության ենթատեքստը. ի՞նչ է հեղինակը կամեցել հասկացնել ընթերցողին:

գ. Տարբերել արձակի և չափածոյի ընթերցման յուրահատկությունները: ՏՀՏ տեսալսողական սարքերի միջոցով ունկնդրել հեքիաթ և բանաստեղծություն ու համեմատել դրանք:

դ. Մտքում ընթերցելով՝ առանձնացնել այն գլխավոր հատվածները, որոնք հատկապես հուզել են, հետաքրքրել և զգացմունքներ առաջացրել:

ե. Կատարել արտասանական վերլուծություն՝ ո՞ր տողը ինչպե՞ս պետք է ընթերցել (ձայնի ինչպիսի՞ բարձրությամբ, ի՞նչ շեշտադրումներով և այլն):

Ուսումնասիրությունները, ցույց են տվել, որ այս ամենի արդյունքում ատիճանաբար ձևավորվում է երեխաների արտահայտիչ կարդալու հմտությունը, նրանք սովորում են առավել վարժ, սահուն, արտահայտիչ ու հասկանալով կարդալ բնագիրը:

Դերերով և խմբովին կարդալը ևս մեծապես նպաստում է կրտսեր դպրոցականների արտահայտիչ կարդալու կարողության զարգամանը, քանի որ այդ դեպքում նրանք գիտակցում են հերոսների խոսքը, հնչերանգը, ձայնի փոփոխությունները և, ըստ այդմ էլ, ընտրում են կարդալու ճիշտ ձևն ու եղանակը:

Արտահայտիչ ընթերցանության կարողության ձևավորումը նպատակահարմար է իրականացնել և՛հատուկ, և՛հարակից վարժությունների միջոցով: Հատուկ վարժությունները կատարվում են անմիջապես մայրենիի դասերին՝ նպատակաուղղելով հենց արտահայտիչ ընթերցելու կարողությունների զարգացմանը, իսկ հարակից վարժությունները անցկացվում են լեզվական որևէ նյութ բացատրելու ընթացքում, երբ ուսուցիչը միևնույն ժամանակ երեխաներին հանձնարարում է բարձրաձայն ընթերցել նախադասությունը՝ պարզ, հստակ և արտահայտիչ: Տվյալ դասի համար այդ թեման հիմնականը չէ, բայց ուսուցիչը, օգտվելով իրավիճակից, բնագրի ընթերցմանը զուգընթաց հիշեցնում է արտահայտիչ խոսքի պահանջները: Արտահայտիչ կարդալու կարողության զարգացման հատուկ վարժանքներից է **տրամադրության բառարանը, նկարի բառային նկարումը, մրցակցային ընթերցանությունը:**

Տրամադրության բառարան: Գրում են ընթերցվող բնագրի «ուրախ», «տխուր», «երջանիկ», «ոգևորված», «մեղմ» բառերը, վերլուծում են նյութը և եզրակացնում, թե հեղինակն ինչ զգացմունքներով ու հույզերով է գրել տվյալ ստեղծագործությունը: Այնուհետև ընթերցելիս ձգտում են արտահայտել այդ տրամադրությունները:

Նկարի բառային նկարում: Այս վարժությունն անվանում են «բառային նկարչություն»: Աշակերտները փորձում են բառերով նկարագրել պատկերվող իրադարձությունը, գործող անձերին, առանձնացնում են ստեղծագործության մի հատված՝գույներով ներկայացնելու համար: Այս նկարչություն-վարժությունը զարգացնում է նաև կրտսեր դպրոցականների երևակայությունը:

Մրցակցային ընթերցանությանն ու արտահայտիչ ընթերցելուն նախապատրաստվելիս սովորողը պետք է հետևի հետևյալ քայլաշարին.

- կարդալ և երևակայությամբ պատկերացնել ընթերցվող բնագիրը,
- որոշակի վերաբերմունք դրսևորել նկարագրվող դեպքերի նկատմամբ,
- որոշել կարևոր մտքերն ու ասելիքն ամբողջացնող տողերը,
- ընտրել արտահայտչամիջոցները, տրամաբանական շեշտերի տեղը, նշել դադարները, տեմպը և այլն,

- անպայման նկատի ունենալ, որ բնագիրն ընթերցում է ունկնդիրների համար:

Նմանատիպ վարժությունները զարգացնում են երեխաների արտահայտիչ կարդալու գործնական հմտությունները: Նրանք փորձում են արտահայտել իրենց տպավորությունները, մտքերը, հուզմունքները՝ ձեռք բերելով գեղեցիկ ու տպավորիչ խոսք կառուցելու կարողություն:



Ընթերցողական կարողությունների զարգացումը տարրական դասարաններում

Եթե սովորողի մոտ ձևավորված է կարդալու կարողությունը, ապա ընթերցած բնագրի շուրջ տարվող մեթոդապես ճիշտ աշխատանքի շնորհիվ ընթերցանությունը դառնում է նաև անձի բազմակողմանի զարգացման միջոց:

Անառարկելի է, որ ընթերցանությունը գիտելիքների ձեռք բերման, բազմակողմանի զարգացման, բառապաշարի հարստացման հիմնական աղբյուր է: Կարդալու միջոցով հարստանում ու զարգանում են աշակերտների երևակայությունը, հոգեկան ներաշխարհը, խոսքը, ճաշակը: Հենց այս է պատճառը, որ մանկավարժներն ու մեթոդիստներն ամեն ինչ անում են սերունդների մեջ ընթերցողական կարողությունների մշակման, ընթերցասիրության դաստիարակության համար: Այս կարևոր խնդրի լուծման ճանապարհին հիմնականը կարդալու հմտությունների զարգացումն է:

Որպեսզի երեխան սիրի գիրքը և կարդա, պետք է ուսուցիչը լավ կարդալ սովորեցնի աշակերտներին ու օգնի նրանց հաղթահարելու կարդալու ընթացքում առաջացած դժվարությունները:

Ա. Ղարիբյանը ժամանակին ասել է. *«Բացատրական ընթերցանության հիմնական նպատակներից է կարդալ սովորեցնելը, որովհետև կարդալու ուսուցումը լեզվի ուսուցման ամենահիմնական ու պատասխանատու բաժինն է: Թե՛ լեզվի մյուս բաժինների և թե՛ միջնակարգի բոլոր այլ առարկաների յուրացումն ապահովում է աշակերտի կարդալու հմտությամբ: Անհնարին է ծանոթանալ որևէ գիտության հիմունքներին, առավել ևս դառնալ ժամանակակից կուլտուրայի պահանջների բարձրության վրա կանգնած մարդ, եթե կարդալ չգիտես: Կարդալու ուսուցման որակից է կախված մյուս առարկաների ուսուցման հաջողությունը, իսկ կարդալու հմտության հիմնական որակը որոշվում է կարդալու ուսուցմամբ տարրական դասարաններում»:*

Կրտսեր դպրոցականի ընթերցողական կարողությունների զարգացումը նպաստում է ուսուցման արդյունավետության բարձրացմանը: Ճիշտ, սահուն, հասկանալով, արտահայտիչ կարդացող աշակերտներն ավելի լավ են սովորում ցանկացած առարկա, քան կցկտուր

կարդացողները: Բանն այն է, որ վատ կարդացողն ընթերցելիս իր ուշադրությունը հիմնականում կենտրոնացնում է կարդալու գործողությանը և չի ըմբռնում կարդացածի բովանդակությունը, հիմնական միտքը և այլն: Լավ կարդացողն արագ է ըմբռնում, հասկանում բնագիրը, որովհետև նա ժամանակ չի ծախսում կարդալու գործողության վրա:

Ընթերցանության նկատմամբ հետաքրքրասիրություն աշակերտների մեջ պետք է առաջացնել դեռևս առաջին դասարանից: Այդ իսկ պատճառով այբբենարանն ավարտելուց հետո անգամ պետք է փոքրերի համար կարդալ հետաքրքիր հեքիաթներ և իրենց նույնպես դրդել դրանք կարդալ, հետաքրքրություն առաջացնել կարդալու նկատմամբ:

Գրաճանաչության ուսուցման շրջանում ձևավորվում է կարդալու նախնական կարողությունը:

Աշակերտն առաջին հերթին պետք է հոգեբանորեն պատրաստ լինի և իր մեջ ձևավորի այն համոզմունքը, որ ինքը նոր նյութը՝ հեշտ թե դժվար, կարող է կարդալ: Ըստ Ջ. Գյուլամիրյանի՝ *«Աշակերտը կարդալ սովորում է ոչ թե նույն նյութը բազմակի ընթերցելով, այլ անծանոթ նյութերի անընդհատ ընթերցմամբ»:*

Այժմ մշակվել են ոչ ավանդական ժամանակակից բազմաթիվ մեթոդներ և հնարներ, որոնց միջոցով աշակերտներն ավելի հաճախ են ընթերցում ինքնուրույն կամ խմբովի: Սրանք նպաստում են կարդալու գործընթացի արդյունավետությանը: Այդ մեթոդների անտեղի օգտագործումը կխոչընդոտի ուսուցման գործընթացի հաջող իրականացմանը: Իսկ որոշ մեթոդների կիրառումը դժվար կլինի, եթե աշակերտները լավ չտիրապետեն լավ կարդալու տեխնիկային, օրինակ՝«Խճանկար» մեթոդը: Նախ աշակերտն առաջին խմբում պարտավոր է սովորել նոր նյութը, ապա սովորեցնել մյուս խմբի ընկերներին: Եթե նա ընթերցողական հմտություններ չունի, ապա չի կարողանա կատարել տվյալ հանձնարարությունը:

Մանկավարժական պրակտիկայում կիրառվում են կարդալու կարողությունը զարգացնող մեթոդներ: Արդյունավետ է «Փոխգործուն գրառումների համակարգ», «Քառաբաժան», «Կրկնակի գրառումներով օրագիր», «Մտածի՛ր-զուգորդի՛ր-մտքե՛ր փոխանակիր» և այլն:

Կարդալու կարողությունների զարգացման լավագույն միջոց է ինքնուրույն ընթերցանությունը: Որպես միջոց՝ արդյունավետ է արտադասարանային ընթերցանության ճիշտ կազմակերպումը: Այդ աշխատանքը հարկավոր է այնպես կազմակերպել, որ երեխան հայտնվի

գրքերի կախարդական աշխարհում և կապվի գրքին: Կարդացած նյութը պետք է լինի զարմանալի, հրաշալի, հեքիաթային, որպեսզի գիրքը դառնա երեխայի «լավագույն ուղեկիցն ու բարեկամը»:

Ինքնուրույն ընթերցանություն կազմակերպելիս որպես հնար կարելի է օգտագործել բարձրաձայն կարդալը (երեխաների համար զվարճալի կարող է լինել, երբ նրանց առաջարկվի ձայնագրել սեփական խոսքը բարձրաձայն կարդալիս, ինչը հնարավորություն կտա լսելու և գնահատելու սեփական խոսքը, բարելավելու դրա արտահայտչականությունը): Ամենակարևոր գործոններից է հասկանալով կարդալը: **Այս դեպքում կարդալը դառնում է ոչ թե նպատակ, այլ միջոց: Նպատակը դառնում է ընկալումը, իսկ կարդալը՝ պայման:**

Ընթերցանությունը որպես բառապաշարի հարստացման միջոց

Աշակերտների բանավոր ու գրավոր խոսքի զարգացման հիմքերը դրվում են տարրական դասարաններում: Մարդն իր ողջ կյանքի ընթացքում շփվում է իր նմանների հետ, խոսում, զրուցում, որևէ լուր հաղորդում, վիճում և այդ բոլորը՝ խոսքի միջոցով: Բնականաբար, որքան բարձր է մարդու խոսքի մշակույթը, որքան նա հստակ ու ճիշտ է արտահայտում իր մտքերը, հաղորդակցվում շրջապատի հետ, այնքան բովանդակալից է նրա խոսքը, հաճելի է նրան լսելը:

Խոսքի զարգացման ուղղությամբ տարվող աշխատանքներն անհնար է պատկերացնել առանց ընթերցանության, քանի որ ընթերցանությունը մտածողության և մտավոր զարգացման ակունքներից մեկն է:

Կարդալը մարդու հոգեկան և մտավոր աշխարհի հարստացման ու զարգացման ամենաարդյունավետ միջոցն է: Դժբախտաբար, այսօր մեր սերունդը քիչ է կարդում. մասնավորապես կրտսեր դպրոցականի համար կարդալու հիմնական միջոցը դասագիրքն է: Տարբեր պատճառներով (սոցիալական, հոգեբանական, մանկավարժական) այդ տարիքի երեխաները կարդում են (չնչին բացառությամբ) միայն դասագրքերում զետեղված ստեղծագործությունները:

Մինչդեռ շատ կարևոր դեր ունի նաև արտադասարանական ընթերցանությունը, որի միջոցով կարող ենք սեր արթնացնել գեղարվեստական գրականության նկատմամբ, բազմաբնույթ դաստիարակչական աշխատանք կատարել աշակերտների բնավորության ու վարքի ձևավորման ուղղությամբ: Այն նպաստում է նաև երեխաների աշխարհաճանաչմանը, մտահորիզոնի զարգացմանը, հետաքրքրությունների բավարարմանը:

Աշակերտների բառապաշարի հարստացման աշխատանքները կատարվում են ընթերցանության դասի բոլոր փուլերում՝ և՛ նոր նյութ հաղորդելիս՝ ակտիվ երկկողմյան զրույցների միջոցով, և՛ ընթերցելիս ու պատմելիս, և՛ բառային աշխատանքի ու բնագրերի վերլուծության ժամանակ:

Նոր նյութի հաղորդման ժամանակ, մինչև բնագրի առաջին ընթերցումը, ուսուցիչն անցկացնում է **ակտիվ երկկողմանի հարցազրույց,** որպեսզի երեխաների հոգում

համապատասխան հույզեր ու զգացմունքներ առաջանան, նրանք ընկալեն ստեղծագործության բովանդակությունն ու կերպարները։

Նոր նյութի հաղորդման հաջորդ փուլը բնագրի ընթերցումն է նախ ուսուցչի, ապա՝ աշակերտների կողմից։ Այն շատ կարևոր նշանակություն ունի ինչպես կարդալու հմտությունների մշակման, նյութի բովանդակության ընկալման, այնպես էլ բնագրի լեզվարտահայտչական միջոցների խոր ու բազմակողմանի զարգացման համար։

Կրտսեր դպրոցականների տարիքային առանձնահատկություններից է ընդօրինակումը։ Այդ տարիքի երեխաների համար իրենց ուսուցիչն ամենակարողն է, և նրա թե՛ խոսքը, թե՛ ձայնը, թե՛ շարժուձևն ու դիմախաղերը կրկնօրինակման աղբյուր են, ուստի ուսուցչի խոսքը շատ կարևոր է կրտսեր դպրոցականների խոսքային կարողությունների ձևավորման գործընթացում։ Նշանակում է՝ նախքան առաջին բառը կարդալը երեխան պիտի լսի ուսուցչի, ծնողի ընթերցանությունը, որպեսզի զգա գեղարվեստական պատկերների գեղեցկությունը, «տեսնի» շրջապատող աշխարհն իր ողջ հմայքով։ Ուստի պետք է հետամուտ լինել, որ առաջին դասարանից սկսած՝ ընթերցանությունը դառնա երեխայի համար հոգևոր պահանջմունք։ Այս նպատակին հասնելու համար անհրաժեշտ է լուծել մի շարք խնդիրներ.

1. Կարդալու կարողությունների ու հմտությունների զարգացում. հասնել նրան, որ տարրական դպրոցն ավարտող երեխան կարողանա կարդալ վարժ, սահուն, գիտակցորեն ու արտահայտիչ։

2. Բանավոր ու գրավոր խոսքի զարգացում. երեխան կարողանա պարզ, անկաշկանդ, գեղեցիկ բառապաշարով արտահայտել իր մտքերը, հաղորդակցվել շրջապատի մարդկանց հետ։

3. Կարդալու և խոսելու մշակույթի ձևավորում, ուրիշներին լսելու և ճիշտ ու փաստարկված պատասխանելու կարողության զարգացում։

4. Աշակերտի երևակայությունը, ստեղծագործական ու մտավոր ունակությունները խթանող լեզվական միջոցների գործադրում։

5. Ուսումնասիրել այնպիսի նյութեր, որոնք ոչ միայն ընդարձակեն սովորողների ճանաչողության սահմանները, այլև սեր ու հետաքրքրություն առաջացնեն գեղարվեստական գրականության, մասնավորապես՝ ընթերցանության նկատմամբ, նպաստեն աշակերտի հոգևոր, մտավոր ու բարոյական առաջընթացին։

Ամեն մի վերընթերցման ժամանակ ուսուցիչը պետք է բացահայտի մի նոր բան, այնպիսի մանրամասներ, որ առաջին, երկրորդ ընթերցումների ժամանակ չեն նկատել երեխաները, նրանց ուշադրությունը հրավիրի գեղարվեստական պատկերների, կերպարների բնութագրումների, գործող անձերի, լեզվի, ոճի, դաստիարակչական ու ճանաչողական հարցերի վրա:

Տարրական դասարաններում գործադրվում են մեթոդիկայում ընդունված կարդալու շատ ձևեր՝ բարձրաձայն, լուռ, դերերով, խմբովին և այլն: Կարդալու կարողությունների մշակման համար ամենաարդյունավետը ձայնով կամ բարձրաձայն կարդալն է, երբ աշակերտը լսում է իր ձայնը, և ավելի լավ են մշակվում կարդալու հմտություններ, մասնավորապես արտահայտչականություն:

Կարդալով՝ երեխաները ծանոթանում են գեղարվեստական գրականության ընտիր նմուշներին, լսում են գրական լեզուն, որն ընդլայնում ու ակտիվացնում է նրանց բառապաշարը, օգնում սեփական դատողություններն արտահայտելու համար անհրաժեշտ բառեր ընտրել և օգտագործել խոսքում:





Ընթերցանությունը մտքի համար նույնն է,ինչ ֆիզիկական վարժությունը՝ մարմնի

Ինչպես նշում է անգլիացի պոետ Ադիսոնը. «Ընթերցանությունը մտքի համար նույնն է,ինչ ֆիզիկական վարժությունը՝ մարմնի»: Իսկ ահա հանճարեղ Չարենցը գրքերի աշխարհը անեզր տիեզերքի է նմանեցնում՝ ձոնելով գրքերի հատուկ տաղ: Մարդկության պատմության մեջ չկա մի հանճար, ով բացառի ընթերցանության ու գրքի կարևորությունը:

Վազքը բարելավում է սիրտ-անոթային համակարգի աշխատանքը, պարբերաբար ընթերցանությունը բարելավում է հիշողությունը՝ մարզելով ուղեղը: Տարիքի հետ հիշողությունն ու ուղեղի աշխատանքը թերանում են, սակայն ընթերցանությունը օգնում է դանդաղեցնել այդ գործընթացը՝ ավելի սթափ պահելով միտքը: Ուղեղի հաճախակի վարժանքները կարող են իջեցնել ուղեղի ծերացումը շուրջ 32 տոկոսով:

Չնայած նրան, որ ավելի ու ավելի շատ մարդիկ ձեռք են բերում էլեկտրոնային գրքեր՝ արժե հուսալ, որ տպագիր գրքերը չեն պատրաստվում վերանալ: Մարդիկ, ովքեր կարդում են էլեկտրոնային գրքեր, այնուամենայնիվ դեռ շարունակում են կարդալ նաև տպագիր: Եվ չնայած մենք բոլորս կողմնակից ենք թվային հարմարավետությանը, սակայն չենք կարող մեզ զրկել հին տպագիր գրքեր կարդալու հաճույքից:

Չկա ավելի լավ բան, քան հին գրքերի հոտը կամ նորի հիմքի ճեղքվածքը. գումարած՝ երբեք չի լինի մարտկոցների հետ կապված խնդիր: Եվ ստացվում է, որ այս ամենը օգտակար է նաև առողջության և երջանկության համար:

Ընթերցանությունը քնելուց առաջ կարող է օգնել՝ ավելի լավ քնել: Այն դարձնելով սովորություն՝ մեր ուղեղին ազդանշան ենք տալիս, որ ժամանակն է գնալ քնելու: Գրքի ընթերցանությունը ավելի շատ է հանգստացնում, քան քնից առաջ էկրանին նայելը: Պլանշետների և էլեկտրոնային գրքերի էկրանները, ըստ էության, մեզ պահում են արթուն ավելի երկար և նույնիսկ վնասում մեր քունը: Դա վերաբերում է նաև երեխաներին:

Ծնողները ցանկանում են, որ իրենց երեխաները ավելի շատ կարդան հաճույքի համար, և նրանք, ովքեր ցանկանում են խրախուսել իրենց երեխաներին դառնալ գրքասեր, կարող են սկսել

տանը բարձրաձայն կարդալուց: Օրինակ բարձրաձայն կարդալը երեխաներին փոքր տարիքից կարող է ոգեշնչել՝ դառնալ հաճախակի ընթերցող, կամ երեխա, ով կարդում է շաբաթը հինգից յոթ օր ուղղակի հաճույքի համար: Սա լավ ձև է այն հոբբի դարձնելու համար: Մանկական գրքերը երեխաների բառապաշարը ավելացնում են ավելի քան 50 տոկոսով, ի տարբերություն հեռուստատեսության:

Մեծերի ասույթներից.

► *Լավ գիրքն այն գիրքն է, որ գրել է լավ մարդը:* Վիլյամ Սարոյան

► *Կյանքը պետք է լցված լինի գրքերով, որոնք լի են կյանքով:* Մարկ Ավրելի

► *Գրքերն ապահով ու սառը բարեկամներ են:* Վիկտոր Հյուգո

► *Գիրքը պետք է կարդալ մատիտը կամ գրիչը ձեռքին: Ոչ մի բան այնպես չի ձևավորում ճաշակն ու դատողությունների ճշտությունը, ինչպես դուր եկած հատվածն արտագրելու կամ խորիմաստ միտքը նշելու սովորությունը:* Անդրե Մորուա

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Առանց ընթերցանության չկա իսկական կրթություն, չկա և չի կարող լինել ո՛չ ճաշակ, ո՛չ խոսք, ո՛չ բազմակողմանի լավ ըմբռնում…»։

Ալեքսանդր Գերցեն

Ինչպես արդեն նշել եմ՝ գիրք կարդալը կարելի է համեմատել սպորտով զբաղվելու հետ։ Ինչպես մարզվելիս մկաններն անընդհատ աշխատում են և ավելի են ուժեղանում, այնպես էլ գիրք կարդալիս մարզվում է ուղեղը՝ հիշողությունը, երևակայությունը, մտածողությունը։

Այսօր շատերը կարծում են, թե գովելի է այն փաստը, որ իրենց 2 տարեկան երեխան կարողանում է օգտվել համակարգչից։ Հենց այդ նույն ծնողները վտանգում են իրենց երեխաների առողջությունը և ապագան։ Այսօր երեխաները չունեն մանկություն, բակում չկա խինդ ու ծիծաղ, չկան խաղեր։ Բոլորը փակված իրենց սենյակներում կուրանում և կուզիկանում են։ Պետք է գի՛րք կարդալ։

Գիրքն ու համակարգիչը ոչ թե պետք է հակադրվեն, այլ իրար լրացնեն։ Համակարգիչը ավելի շատ տեղեկատվական գիտելիքներ է պարունակում իր մեջ, ցանկացած նորություն կարելի է շատ արագ գտնել համացանցից։ Սակայն շատ ավելի հաճելի է կարդալ գրքից։ Գիրքն անփոխարինելի հաճույք է։

Հետազոտությունները ցույց են տալիս, որ ինչքան շատ են երեխաները կարդում, այնքան նրանց բառապաշարը հարստանում է, և դրան զուգահեռ զարգանում են նրանց կոգնիտիվ (իմացական) կարողությունները։ Վաղ տարիքում կարդալու հմտությունները կապված են հետագայում բարձր ինտելեկտի հետ։ Կարդալը նպաստում է ուրիշների մտավոր աշխարհը ավելի լավ հասկանալուն, ընթերցանությունը նաև լիցքաթափում է սթրեսից։

Երեխաների համար պետք է կարդալ գրքեր շատ փոքր տարիքից, նույնիսկ դեռ չծնված ժամանակ։ Որքան փոքր ժամանակից նրանք առնչվեն ընթերցանության հետ, այնքան հետագայում ավելի հեշտ և հաճույքով կզբաղվեն գիրք կարդալով։

Այսպիսով, **խթանելով և զարգացնելով ընթերցանությունը, կունենանք գրագետ, բանիմաց, խելացի և բազմակողմանի զարգացած քաղաքացիներ, որոնց կարիքը մեր երկիրը շատ ունի։**

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀՂՈՒՄՆԵՐ

Խարազյան Ռոզա Փաշիկի «Աշակերտների բառապաշարի հարստացումը տարրական դասարաններում», Երևան-2003

«Նախաշավիղ» գիտամեթոդական հանդես 1.2013, Երևան-2013

«Նախաշավիղ» գիտամեթոդական հանդես 6.2015, Երևան-2015

https://hy.wikipedia.org/wiki/

https://www.poqrikishkhan.am/

https://forum.armedu.am/forum/

https://multiurok.ru/files/

https://mediamax.am/